## 82. ԱՄՅՈՒՐ-ՅԱՄԱՆ

Կէլնի. չէլնի մէյ խատ թակավոր: Էսա թակավորուն իրեքյ խատ ախչիկ կէլնի: Էսա ախչիկներ մեկ օր կնստեն ինոնց խաս բախչեն խետ մեկ մեկու խաբար կուտան, կասեն. - Մենք բիթունս էլ ճոչցիր ենք, բիթունս էլ պսակվելու իլիր ենքյ, աման մեր խեր իսկի վեր ուր չի մտածե, իկեքյ մենքյ փել ֆա̈նդով ինոր խասկըցուցենք:

Ճոչ ախչիկն ի. կասի. - Էդա պա̈ն տուքյ թողեքյ ծիկ, ես կիտեմ ինչխ կանեմ՝ կանեմ:

Ճոչ ախչիկն ի, կկանչի ուրենց բա̈խչըպան բաշեն, կասի. - Զիկ իրեքյ խատ ծմրյուկ պե, ամա մեկ ծմրյուկ վերեն ընցուկ էլնի, մեկ ծմրյուկ խորոտ խասուն էլնի, էն մեկ ծմրյուկն էլ թա̈զա̈ նորախաս էլնի:

Բա̈խչըպան բաշին ի, թակավորու ախչկան ուզածի պես իրեքյ խատ ծմրյուկ կպերի կուտա թակավորու ախչկան:

Թակավորու ախչիկն ի, կառնի էսա իրեքյ ծմրյուկներ, կտնի մեչ մեկ խատ ոսկի սինու, վերեն էլ մեկ խատ ոսկի թեղ-թյուղ կքյաշի, կկանչի ուր խալայեղներից մեկ խոգյի, էտա ծմրյուկներ էդա ոսկի թաբախով կուտա ինոր ծեռ, կասի՝ էսա կտանես, կտնես թակավորու ա̈ռճև, կասես՝ քյո ախչկներ օրոխկիցին քյե ճա̈ղիեա̈:

Խալայեղն ի, կառնի էտա ոսկի թաբախ ծմրկներաց խետ կտանի կտնի թակավորու ա̈ռճև:

Թակավոր որ թյուղ կպա̈նա̈, կտիսնա, որ ի՞նչ, իրեքյ խատ ծմրյուկ: Կտա̈ռնա էդա ծմրկներ պիրող խալայեղին կխարցուցի, կասի. - Էսա ի՞նչ ի:

Խալայեղ կասի. - Թակավոր ապրած կենաս, ծմրյուկ ի:

Թակավոր կասի. - Կիտեմ ծմրյուկ ի, աման քյեզնից վո՞վ ծմրյուկ ուզեց, որ տու ծմրյուկ պիրիցեր:

Խալաչեղն ի, կասի. - Թակավոր ապրած կենաս, էդա ծմրկներ քյո ախչիկներ օրոխկիցին քյե ճա̈ղիեա̈:

Խալայեղն ի, էսա որ կասի, կթողնի կէլնի տյուս:

Թակավորն ի, չախուն կառնի ծեռ, կասի. - Ես իմ ախչկներաց օրոխկած ճա̈ղիա̈ներաց մարիֆաթ պիտի ջոբեմ, տեսնանքյ խենքյ ի՞նչխ ի:

Էն մեկ ծմրյուկ կկիսի, կտեսնա, որ գյետ նոր ատեր ի խասնել:

Էն մեկել ծմրյուկ կկիսի, կտիսնա, որ խորոտ խասաուն ի, ճաման ուտելու վախտն ի:

Էն մեկել ծմրյուկն էլ որ կկիսի, կտիսնա, որ ի՛նչ՝ լխկվե, վերեն ընցեր ի: Իսկի չի ուտվե:

Թակավորն ի, որ էսա պա̈ն կտեսնա, շատ կմտածի, ամա̈ն խելքյ չի կանա խասուցե, կկանչի ուր վա̈զիրին, կասի. - Վա̈զիր ախպե՛ր, իմ ախչկներ զիկ իրեքյ խատ ծմրյուկ են օրոխկե. մեկ ծմրյուկ կիսեցի նորախաս էր, մեկ ծմրյուկ կիսիցի խորոտ խասուն ուտելու ծմրյուկ էր, էն մեկ ծմրյուկն էլ, որ կիսիցի վերեն ընցուկ. լխկուկ, խարա̈մ պա̈ն էր, էսա ի՞նչ պիտի էլնի աչեք:

Վազիրն ի, մեկ խատ քյթի տկանց կծծղա, կասի. - Թակավոր ապրած կենաս, էդա իրեքյ ծմրկներ որ կան՝ քյո իրեքյ ախչըկներն են: Էն նորախաս ծմրյուկ, որ կա՝ քյո պզտիկ ախչիկն ի, էն խասուն ծմրյուկ, որ կա՝ քյո օրթանջի ախչիկն ի, որ խասե իլե պսակվելու, էն վերեն ընցուկ ծմրյուկ, որ կա՝ էն էլ քյո ճոչ ախչիկն ի, որ չպսակիցիր, չպսակիցիր, չուր տախացավ, գյախնի բիթուն-բիթուն պառվընա: Քյո ախչկներ տեսեր են, որ տյու վեր քյե չես մտածե, էլիր են էսա ծմրկներ օրո̈խկիր են քյե քյի, քյե խասկցուցիր են, որ՝ մե պսակի:

Թակավորն ի, որ էսա պա̈ն կլսի, կասի. - Աֆսուըմ, վազիր, ես իմ աստված, իմ խելքյ չէր խասնե, ես չուր էսօր վեր էդա պա̈նին չի մեզե, իմ ախչիկներ ճաղ ունեն:

Թակավորն ի, էն մեկելոց ամր կանի, որ ուր քյաղքյի մեչ ինչ կյա̈նդա̈ր, որ շաճել կա, բիթուն գյա̈ն կայնեն ուր քյեոշկ-սարի առա̈ճ: Ուր իրեքյ ախչկներացն էլ կպիրի մոտ զինքյ, ճըմեն մեկի ծեռ մեկ խատ կանաչ ճպոտ կուտա, կասի. - Էսա շաճելներաց վիր որ խավնիր եքյ, ծեր ծեռաց ճպոտով ինոր զարկեքյ, ես ծե կպսակեմ վեր ինոր:

Ճոչ ախչիկն ի, ուր ճպոտ կզա̈րկի վա̈զիրի լաճուն: Վա̈զիրի լաճու խետ կնշանվի:

Օրթանջի ախչիկն ի, ուր ճպոտ կզա̈րկի սա̈րա̈սքեարի լաճուն, խետ ինոր կնշանվի:

Պզտիկ ախչիկն ի, ուր ճպոտ կզա̈րկի՝ մարթու չի դիպնե, կէրթա̈ կդիպնի գյետի ափ մեկ խատ սիվդակ քյարին:

Թակավորն ի, կասի. - Էդա չէլավ, ճպոտ պիրեքյ թող մեկ խատ էլ զա̈րկի:

Ճպոտ կպիրեն: Թակավորու ախչիկն ի, մեկ էլ կթալի, գյինաւ կէրթա, կդիպնի էդա սիվդակ քյարին:

Թակավորն ի, ամր կանի, կասի. - Մեկ խատ էլ թա̈լ, թող էլնի իրեքյ:

Ախչիկն ի, մեկել կթա̈լի, գյինա̈ւ կէրթա̈ կդիպնի էդա սիվդակ քյարին:

Թակավորն ի, որ էսա կտիսնա, կասի. - Որ ընկուն ի, ճալա̈ քյո պսակվելու գյա̈խ չի:

Ախչիկն ի, կասի. - Չէ՛, թակավոր ապրած կենաս, կա չկա, իմ կսմաթ էն քյարի տակն ի:

Ամր կանի, ուր խալայեղներաց կասի. - Կնացեքյ էն սիվդակ քյար վիրուցեքյ, ինչ որ կա ինոր տակ, առեքյ պիրեքյ զիկ:

Խալայեղներն են, կէրթա̈ն էն սիվդակ քյար շուռ կուտան, կտեսնան որ ի՛նչ, գյեռ ճոչ գյո̈ռտըմ նստե էդա տեղ: Կվիրուցեն էդա գյո̈ռտ, կպիրեն կուտան թակավորու ախչկան: Թակավորու ախչիկն ի, շատ կմոթի. - Ամա՛ն, - կասի, - ի՞նչխ անեմ, աստված էսա գյո̈ռտն էր արե զիկ կսմաթ:

Էսա կասի, տա̈ռնա̈, գյո̈ռտ կառնի կէրթա̈ ուր էօդեն:

Թակավորն ի, խար-խարսնիս կանի, ուր էրկու ախչկներ կպսակի, իրիկուն որ կէլնի, թակավորու ախչկներ մէ մեկ ուր իրկան խետ քյաշվի ուր էօդեն, էսա պզտիկ ախչիկն է կքյաշվի ուր էօդեն: Ուր սոտի մոմից կբաշլայի լա̈լ:

Ախչիկն ի, որ կբաշլայի լալ. բիրդան էդա կանաչ գյռոտ կպատոի, մեչեն մեյ խատ ջահել տղեմ տյուս կէլնի. որ չուտես, չիմես իսոր խորոտկութեն թամաշա անես: Ախչիկն ի, որ էսա պնն կտիսնա, շատ կուրախնա, համան կխասնի, կփաթթվի էսա լաճուն վիզ:

Լաճն ի կասի. - Որ տյու բախտով էլնես, ես քյե ինչխ որ թամխեմ՝ տյու ըսկուն նստես կայնես. էլ քյե զարար չէլնե:

Ավուր մեկ թակավորու փեսեքյ կխեծնեն ուրենց ծիյանքյ թակավորու սարի առճն ջրինդ կխաղան: Գյռոտն ի, ուր կնգյնն կասի. - Իմ անուն Ամյուր-Ցամա:ն ի, ես մկա իմ ծին կխեծնեմ, կէրթամ ջրինդ կխաղամ: Քյո քյուրեր, որ կուտան վեր քյե ծաղր. չէլնեմ, չիմանամ, որ տյու զիկ ինոնց շանց տաս, ասես՝ էսա իմ իրիկն ի:

Ամյուր-Ցամսնն ի, ուր գյլխուց մեկ խատ մազ կքյաշի, կուտա կրակ, պռգ ծիմ ուր թախմով կուգյա, կկայնի ուր առճն: Ամյուր-Ցամանն ի, կխայնի պռզ խալվներ, կխեծնի պռզ ծին, կէրթա թակավորու սարի առճն, խետ ուր պաչանաղներաց ջրինդ կխաղա:

Թակավորու ճոչ ախչիկներ, որ էսա ջահելին կտեսնան, կուտան վեր ուրենց պզտիկ քյուրոչ ծաղր. կասեն. - Ումուտախո՛ր, բնկեմ թող էսա ջահելն առներ, էն ճկռան գյռոտնից ի՞նչ կխասկնաս:

Պզտիկ քյորն ի. կասի. - Ի՞նչ անեմ, իմ կսմաթն էլ էն ճկռան գյռոտն էր:

Ամյուր-Ցամանն ի. ծին կքյշի կէրթա էն գյլխխ. կուգյա էսա գյլխխ, կզարկի թակավորու էրկու փեսի արախչիներ կթռուցի, ծին կքյշի, կէրթա կկորիսվի:

Էն մեկել օր գյինա թակավորու փեսեքյ կխեծնեն ուրենց ծիյանքյ, կբաշլայեն ջրինդ խաղալ: Ամյուր-Ցամանն ի, ուր գյլխուց մազըմ կքյաշի, կուտա կրակ, սև ծին թախմներով կուգյա կկայնի ուր առճն:

Ամյուր-Ցամանն ի, կխայնի սև խալվներ, կխեծնի սև ծին, կառնի սև ջրինդ կքյշի կէրթա. կբաշլայի ջրինդ խաղալ:

Թակավորու ախչկներ, որ էսա սև ծիյավոր ջահելին կտեսնան, կուտան վեր ինոնց պզտիկ քյուրռչ ծաղր, կասեն. - Ումուտախո՛ր, որ մարթ չկնդար. թող էսա սև ծիյավորն առներ, կննցիր կպար էն ճկռան գյռոտին, էնրից ի՞նչ կխասկնաս:

Պզտիկ քյորն ի կասի. - Ի՞նչխ անեմ, իմ կսմաթն էլ գյեօ էն ճկռան գյռոտն էր:

Ամյուր-Ցամանն ի, ուր ծին կքշի, կէրթա էն գյլխխ, կուգյա էսա գյլխխ, կզարկի թակավորու էրկու փեսի արախչիներ կթռուցի, ծին կքյշի, կէրթա կկորիսվի:

Էն մեկել օր թակավորու փեսեքյ գյինա կխեծնին ուրենց ծիյանքյ, կբաշլային շրինդ խաղալ:

Ամյուր-Ցւամանն ի, ուր գյլխուց մեկ խատ էլ մազ կքյաշի, կուտա կրակ, ըստրիս էլ սիվտակ ծին ուր թախմներով կուգյա, կկայնի ուր առճն:

Ամյուր-Ցւամանն ի, կխայնի սիվդակ խալվներ, կխեծնի սիվդակ ծին, ջրինդ խաղցուցելով կքյշի, կէրթա թակավորու սարի առջև:

Թակավորու ախչկներ, որ էսա սիվդակ ծիյավորին կտեսնան, գյինա կուտան ծաղր վեր ինոնց պզտիկ քյուրոչ, կասեն. - Մկա ճկռան գյռոտն էլ կխեծնի ուր խրեղեն ծին, կուգյա մեյդան կառնի, ասպած քյո տուն ավեր չանի, որ մեչ աշխրին մարթ խլսեր էր, թող էսա սիվտակ ծիյավորն առներ, էն ճկռան գյռոտից ի՞նչ կխասկնաս:

Պզտիկ քյերն ի, էլ չի կանա ուր սոտին խոսքյ խասկցուցե, կտանոա ուր

քյուրերաց կասի. - Հալբաթ ճկուան գյՙոտ կխեծնի ուր խբեղեն ծին կուզյը մեյդան. - Կառնի էսա սիվտակ ծիյավորն էլ, էն առճի էրկու օրվան պոզ էնան սև ծիյավորներն էլ գյեռ էն ճկուան գյՙոտն ի, իմ իրիկն ի:

Թակավորի ախչկներն են, որ էսա պըն կլսեն, շատ կզարմանան. կասեն. - Ախչի՛կ, էն ճկուան գյՙոտ ի՞նչխ կտառնա ըսըսկնա բաբագյիթ մարթ:

Ախչիկն ի, կասի. - Վայլա՛հ, հալ հեքիաթ էն ըռճի օր, որ ես գյՙոտ տարա իմ էօդեն, էն կիշեր բիրդան պատռավ, մեչեն մեկ խատ շահել տղա տյուս էկավ: Գյեռ չուր էսօր էլ ըսկուն ի, կիշրներ կտըռնա մարթ, ցերեկներ կտըռնա գյՙոտ:

Ճոչ քյուրերն են, կասեն. - Աստված քո տուն ավեր չանի, քյո ծեռ ի՞նչխ կէրթը, որ տյու կթողնիս էսա բաբագյիթ մարթ մտնի մեչ էն գյՙոտի կաշուն: Էլի շոտ կնա քյանի որ չի իկե մտե մեչ ուր կաշուն, կրակ արա, էն գյՙոտի կաշին թըլ մեչ կրակին. թող վառվի, որ կաշին վառես, էն կմնա քյո ծեռ:

Պզտիկ ախչիկն ի, էսա պըն որ կլսի, համան շոտմ կվազի կրակ կանի, գյՙոտի կաշին կթըլի մեչ կրակին, կվըռի:

Խետ որ գյՙոտի կաշին կվըռվի, Ամյուր-Ցաման կիմնա: Համան շուտմ ուր ծին կքշի կուզյը, ուր կնգյըն կասի. - Քյանի որ տյու իմ խըբըր ականջ չարեցիր, պողպտե սոլ խայնես, էրկթե գյըվըզըն պռնես, ինիս աշխրե-աշխար, զիկ կան գյըս, չուր են պողպտե սոլ չծակվի, էրկթե գյըվըզըն չկոռվի, զիկ չի կանաս կնդնե. - Էսա խըբըր կասի թե չէ, կկուրիսվի:

Պզտիկ ախչիկն ի, կտիսնա, որ ուր իրիկ ուր ծեռնեն կնըց, կտփի մեչ ուր գյլխուն, կուլը, կմոմոա էլ ֆըյդը չանե:

Ճար կկտրի, կէլնի ուր խոր կասի. - Թակավոր ապրած կենաս, զիկ մեկ ջուխտ պողպտե սոլ տուր շինել, մեկ խատ էլ էրկթե գյըվըզըն: Ես պիտի ինեմ աշխրե-աշխար իմ իրկան ետև կան գյըմ:

Թակավորն ի, ինչ լեզյու որ կթափցուցի, չի կանա վեր ուր ախչկան: Ճար կկտրի, ըմր կանի, որ մեկ ջուխտ պողպտե սոլ, մեկ խատ էլ էրկթե գյըվըզըն շինեն տան ուր ախչկան: Ախչիկն ի, պողպտե սոլեր կխայնի, էրկթե գյըվըզըն կառնի ծեռ, լըլով, մոմոալով կինի ճըմբըխ կէրթը: Շատ կէրթը, քիչ կէրթը, կխասնի մեյ խատ քյաղաքյմ, կտեսնա, որ ի՞նչ, էդա քյաղաքյ բիթուն էրկթից շինուկ ի, մեկ խատ էլ էրկթից պերթ գյեռ էդա քյաղաքյի օրթալաղն ի: Ախչիկն ի, շատ ծարավ կէլնի, կինի էսա յան, էնա յան, ճյուր չի կանա կնդնի: Կտիսնա, որ պերթի տակ ըխպյուրմ կա, կէրթը տեխ էտա ախպյուր, սկուն նեղացեր էվր. որ շեռրով զինք կթփի ախպրի գյլխու քյարի վերեն: Կտիսնա, որ էդա էրկթե պերթից մեկ խատ ախչիկ կիճնի, էրկթե գյուգյում ծեռ կուզյը ախպյուր ճյուր կլցի, որ էրթա, էսա ախչիկն ի, կասի. - Էրկթե պերթի ախչի՛կ, էրկթե գյուգյումով ճյուր կրող ախչի՛կ, Ամյուր-Ցամանի սադաղեն, լից քյո գյուգյում տուր մեյ կտոր ճյուր խմեմ:

Էրկթի պերթի ախչիկն ի, որ Ամյուր-Ցամանի անուն կլսի, պերան կմնա պըց, կտըռնա էտա ախչկան կխարցուցի, կասի. - Է՛յ, խողածին, տյՙու Ամյուր-Ցամանին ո՞ր տեղեն կճանչնաս:

Ախչիկն ի մեկ խատ «ա՛խ» կքյըշի, կասի. - Ապա տյՙու ո՞րտեղեն կճանչնաս:

Էրկթե պերթի ախչիկն ի կասի՝ Ամյուր-Ցաման որ կա՝ իմ ախպերն ի:

Ախչիկն ի, որ էսա պըն կլսի, կիրիշկա ուր ոտի տակ կտիսնա, որ ուր պողպտե սոլ ծակվեր ի, փառք կուտա աստծուն, կուրախնա տըռնա կխարցուցի. - Ապա որ Ամյուր-Ցաման քյո ախպերն ի մկա դՙո՞ր ի:

Էրկթե պերթի ախչիկն ի կասի. - Մոտ ծիկ էր, աման էսրից էրկու սհաթ ատաճ կնաց մոտ իմ ճոչ քյիր:

Թակավորրու ախչիկն ի, կաց պարև կանի, կինի ճամբախ, կէրթա, շատ կէրթա, քիչ կէրթա, կխասնի մեյ խատ քյաղաքյ, կտիսնա, որ ի՛նչ, էդա քյաղաքյ բիթուն առծթից ի շինուկ, մեկ խատ էլ առծթե պերթ գյեռ էդա քյաղաքյի օրթայլաղն ի: Դեմ կանի տեխ պերթ, դողրի կէրթա, կխասնի պերթի տակ, կտիսնա, որ մեկ խատ զղզղուն ախպյուր գյեռ էտա պերթի տկանց կվազի: Կնստի էդա ախպրի գյլխու քյարի վերեն, կմեզի, բիրդան կտիսնա, որ էդա առծթի պերթից մեկ խատ ախչիկմ իճավ՝ առծթե գյուգյում ծեռ, էկավ ճյուր լցեց, որ էրթա:

Թակավորրու ախչիկն ի, կասի. - Առծթե պերթի ախչիկ, առցթե գյուգյումով ճյուր կրող ախչիկ, Ամյուր-Ցւսմանի սադաղեն, լից քյո գյուգյում, տուր մեկ կտոր ճյուր խմեմ:

Առծթե պերթի ախչիկն ի, որ Ամյուր-Ցամսւնի անուն կլսի, պերան կմնա պւսց, կխարցուցի կասի. - Է՛յ, խողածի՛ն, տյու վո՞վ ես, որ Ամյուր-Ցամանին կճանչնաս:

Թակավորրու ախչիկն ի, մեկ խատ «ախ» կքյաշի, կասի. - Ապա տյու՞ որտեղեն կճանչնաս:

Առծթե պերթի ախչիկն ի կասի. - Ամյուր-Ցաման, որ կա՝ իմ ախպերն ի, էսօր մոտ ծիկ էր, աման էրկու սհա̈թ առաճ ան կնաց մոտ իմ մեր:

Թակավորրու ախչիկն ի, կաց պարև կանի, կինի ճա̈մբա̈խ:

Շատ կէրթա̈, քիչ կէրթա̈, կխասնի մեկ խատ քյաղաքյ, կտեսնա, որ ի՛նչ, էդա քյաղաքյ բիթուն ոսկուց ի շինուկ, մեկ խատ էլ ոսկի պերթ գյեռ էդա քյաղքյի օրթաղաղն ի:

Ախչիկն ի, դեմ կանի կէրթա̈ էդա պերթի տակ, կտեսնա, որ գյեռ մեկ խատ անմախական ախպյուր էդա պերթի տկանց կրկչալով կէրթա̈, կլցվի մեչ մեկ խատ ոսկի գյեոլմ, էդա ոսկի գյոլի մեչն էլ ոսկի թիվքերով խավքյեր կլողան: Մեկ էլ կտեսնա, որ ոսկի պերթից ախչիկմ կիճնի տակ՝ ոսկի գյուգյում ծեռ, կուզյա̈ ախպրից ճյուր կլցնի, որ էրթւս, թակավորրու ախչիկն ի կասի. - Ոսկի պերթի ախչիկ, ոսկի գյուգյումով ճյուր տանող ախչիկ, Ամյուր-Ցամանի սա̈դա̈ղեն լից քյո գյուգյում, տուր մեկ կտոր ճյուր խմեմ:

Ոսկի պերթի ախչիկն ի, որ Ամյուր-Ցամանի անուն կլսի, պերան կմնա պա̈ց, կխարցուցի, կասի. - Է՛յ, խողածի՛ն, տյու վո՞վ ես, որ Ամյուր-Ցամանին կճանչնաս:

Թակավորրու ախչիկն ի, մեյ խատ «ախ» կքյաշի, կասի. - Ապա տյու վո՞վ ես, որ Ամյուր-Ցամանին կճանչնաս:

Ոսկի պերթի ախչիկն ի, կասի. - Ամյուր-Ցաման իմ ախպերն ի, գյեռ վեր պերթ նստեր ի:

Թակավորրու ախչիկն ի, ոսկի գյուգյում որ կառնի ճյուր կխմի, ուր մատի մատնիկ գա̈ղտիկ կթա̈լի մեչ գյուգյումին:

Ոսկի պերթի ախչիկն ի, գյուգյում կտանի վեր, կուտա Ամյուր-Ցամանին: Ամյուր-Ցամանն ի, կառնի գյուգյում կդնի պերնին ճյուր կխմի, բիրդան կտիսնա, որ պա̈մ խետ ճրին կնաց ուր պերան, կխանի տյուս, կտիսնա, որ ի՞նչ, ուր մատնիկ որ տվեր էր ուր կնգա̈ն:

Կտա̈ռնա քյիրոչ կխարցուցի, կասի. - Տյու էսա գյուգյում վե՞րն իս տվե, վե՞ր ծեռն ի տիպե էսա գյուգյումին:

Քյուրոչ ճար կկտրի էլ չի կանա պախե, կասի. - Վալլա՛հ, հալ հեքեաթ ես

կնացի ախպըուր ճյուր պերի, էնտեղ մեկ խատ ախչիկմ նստեր էր, որ զիկ տեսավ, ասաց՝ Ամյուր-Ցամանի սնդաղեն էդա գյուգյում տուր մեկ խատ ճյուր խմեմ, ես էլ տվեցի խմավ:

Ամյուր-Ցամանն ի, որ էսա կլսի, կէլնի կէրթա մոտ ախպյուր, կտիսնա, որ ուր կնիկ գյեռ նստեր ի էնտեղ: Մեկ խատ ճպոտ կզարնի վերեն, կանի մեկ խատ կարմիր խնձոր, կտնի շեռպ կէրթնն պերթ:

Ամյուր-Ցամանին մարդակեր մեր իրիկուն որ դնշտեն կուգյա տուն, խետ որ մտնի լաճու էօղեն, կասի. - Էսօր ըստեղեն մարթ մարթախոտ կուգյնն:

Ամյուր-Ցամանն ի կասի. - Մարե՛, սարեն տյու կուգյաս, ծորեն տյու կուգյնս, մարթ մնրթախոտ քյեզնից կուգյնն:

Մերն ի կասի. - Չէ՛, ստեղեն կուգյնն:

Ամյուր-Ցաման կասի. - Չէ՛, ըստեղ մարթ չկա:

Առատունի խետ որ մեր կէրթնն սար, Ամյուր-Ցաման ի, խնձորն կանի կնիկ, կտնի ուր կուշտ, խետ խնրընր կուտա, չուր իրիկուն:

Իրիկուն պառավու գյնլու կյախ, կանի մեկ դնդղա ծաղիկ, կտնի էօղի ըռաֆ:

Իրիկուն ի մեր կուգյնն, կասի. - Ամյուր-Ցաման, էսա տնից մնրթ մնրթախոտ կուգյնն:

Ամյուր-Ցաման կասի. - Մարե՛, սարեն տյու կուգյաս, ծորեն տյու կուգյնս, մնրթ, մնրթախոտ քյեզնից կուգյնն:

Մեր կասի. - Չէ՛, էսա տնից կուգյնն:

Ամյուր-Ցաման կասի. - Չէ՛, քյեզնից կուգյնն:

Առատուն ի մեր գնն կէլնի կէրթնն տաշտ, Ամյուր-Ցաման ծաղիկ կանի կնիկ, կտնի խետ ուր կշտին, խետ խնրընր կուտա չուր իրիկուն:

Իրիկուն ի մոր գյնլու գյնխ կասի. - Բոլ ի, էլ չեմ կանա իմ մոր խապե: - Խետ որ մեր կմտնի ներս, կասի. - Մարե՛, էսա ախչիկ, որ կա՝ իմ կնիկն ի, ես էլ որ կամ՝ քո լաճն եմ, էսա որ կա՝ քո խարսն ի:

Մերն ի, ատըմներ կկռճտացուցի, աման ուր լաճու խաթրից չի կանա էլնե, կասի. - Շատ աղեկ, պալա՛մ, որ ըսկուն ի, թող էրկու խատ կարար առնի էրթա դնշտ խավքու փետուր ժողվի պիրի, որ յաթաղ շինենքյ, խարսնիս անենքյ: Տյու էլ կնա դնշտ, ավ արա, պե, որ կերակուր իփենքյ:

Ամյուր-Ցամանն ի գյնղտիկ ուր գյլխուց մեկ խատ մազ կքյաշի, Լուտա ուր կնգյնն, կասի. - Խետ որ նեղ կենես, էսա մազ կուտաս կրակ, ես խասնեմ:

Ինքյ կթողնի կէրթնն ավ անել:

Թակավորու ախչիկն ի, կառնի էրկու կարար, կէրթնն դնշտ: Ըստեխ կինի, էնտեխ կինի, փետուր չի կանա կըճդնե: Պառվու մոտեն էլ կվնխենա, չի կանա տնռտակ ետ դնռնա: Ի՞նչխ անի, կսկսծու կնստի կուշտմ կուլա, բիրդնն Ամյուր-Ցաման կինի միտ, կխանի ուր մոտի մազ, կուտա կրակ: Ամյուր-Ցաման շոտմ կուգյա, կասի. - Ի՞նչ կուզես:

Ախչիկն ի, կասի. - Քո մեր էսա կարրներ իտուր ծիկ, ասաց՝ կնն դաշտ փիտուր ժողվի: Ես առատե չուր մկա ընգյեր եմ ըստեխ էնտեխ, չորս խատ փետուր չեմ կարցե կըճդնե: Ամյուր-Ցաման ի, կասի. - Մնռնխ մանե՛, ճաման մեյ խատ ճպոտ կզնրնի գյետին, կբոռա՝ Էրկնուց խավքեր, փետու՛ր, փետու՛ր: Մեկ էլ թակավորու ախչիկն ի, կտիսնա, որ ի՛նչ, գյեռ երկնուց երես խավքեր սև կուտան, բիթուն կուգյնն փետրաթափ կէլնեն. կթողնեն կէրթնն:

Թակավորու ախչիկն ի, խետ Ամյուր-Ցամանին էդա փետուրներ կժողվի, կլցնի կարրներ, մեկն ինք կշլկի, մեկ Ամյուր-Ցաման, կտանեն տուն:

Իրիկուն ի, մարթակեր պառավ կուգյա̈ խետ որ կարրներ կտիսնա, կասի. - Հը՛, ես կիտեմ, էտա քյո մարիֆա̈թ չի, իմ Ամյուր-Ցամանի մարիֆաթն ի:

Պառավն ի ըս դիրուն կասի. - Առատուն շուտ կէլնես վեր, քյո արցունքյով տախտ կճրճնես, ծամերովդ էլ տա̈րբա̈ր կավլես, որ ես կուգյա̈մ՛ խարսնիս կանեմ:

Առատունի խեղճ թակավորու ախչիկ կէլնի վեր, կուլա-կուլա ֆա̈յդա չանե, ինչկյա̈ն դա̈րդ պիտի լեր, որ ուր արցունքով տարբար ճրճներ:

Պիրդան Ամյուր-Ցաման կինի միտ, ուր ջեռքի մազ կխանի կուտա կրակ:

Ամյուր-Ցաման կխասնի, կասի. - Ի՞նչ կուլես:

Ախչիկն ի. կասի. - Քո մեր ծիկ թամխեր ի, որ իմ արցունքով տախտ ճրճնեմ, իմ ծամերով էլ ավլեմ, աման ես առատմե կուլա̈մ, թիզմ տեղ էլ չեմ կարցե ճրճնե:

Ամյուր Ցամանն ի ճպոտմ կզա̈նի գյետին, կբոռա. - Անձրև՛, անձրև՛ մաղ-մաղ, քամի՛-քամի՛, ը՛ս-ը՛ս:

Բիրդան կբաշլայի մարմանդ անձրևըմ, էնդից սորա էլ մեյ պա̈րա̈կ քյամիմ ըսալեն կուգյա̈ տա̈րբա̈ր կսերսփի, կէրթա̈:

Պառավն ի, կուգյա̈ տուն, կտեսնա տա̈րբար թե չէ, կասի. - Հը՛մ, ես կիտեմ էսա քյո մա̈րիֆա̈թ չի, իմ Ամյուր-Ցամանի մա̈րիֆա̈թն ի:

Պառավն ի, ինքն ուր կմեզի կասի՝ բոշ պա̈ն ի, էսա իմ պա̈ն չի, օրոխկեմ մոտ իմ քյոր, թող էն ուտի:

Կտա̈ռնա թակավորու ախչկան կասի. - Կնա՛ իմ քյուրոշ մոտեն սազեր պե, որ խարսնիս անեմ, ծե պսակեմ:

Ախչիկն ի, կէլնի որ էրթա̈, Ամյուր-Ցաման կվազի ետև, կասի. - Ախչի՛կ, որ կէրթա̈ս, մեյ խատ արնգյետմ քյե ռաստ կուգյա̈, տյու կկայնես կասես՝ օ՛խ ինչ անուշ ի, իմ խոր նռան գյինին ի, վռազ չէլնի մեկ պուտ խմի: Էնդից սորա մեյ խատ գյոեխ գյետի ռաստ կուգյա̈ս, կասես՝ օխ ինչ անուշ ի, իմ խոր ամբրի արաղն ի, վռազ չէլնի մեկ պուտ խմի: Քո ճամխի վերեն ինչկյա̈նդա̈ր որ ծալուկ խալի կէլնի՝ կպա̈նաս, ինչկյա̈նդա̈ր պաց խալի կէլնի՝ կծալես, ինչկյա̈նդա̈ր կոծ տուռ կա՝ կպա̈նաս, ինչկյա̈նդա̈ր պա̈ց տուռ կա՝ կկոծես: Սորա կտեսնաս տեղմ, որ թոներ վա̈ռվուկ ի, մեկ մարթ ուր ոտներով թոնրի կրակներ կխառնի: Էսա շիշ կուտաս ինոր կասես՝ առ էսա շշով թոներ խառնի, քո ոտքյեր ափսոս ի: Մեյ խատ էլ կա, որ ծեռքյերով գյոտնակ կանի: Էսա գյոտնակն էլ կուտաս ինոր, կասես՝ ծեռքյերդ կցավան, խեղճ իս, առ էսա գյոտնակով խաց պա̈ց: Մեյ խատ էլ կնիկմ կա, որ ուր ծծվերով խաց կթխի, էսա մա̈զրակեն էլ կուտաս ինոր, կասես՝ առ քյե մա̈զրա̈կա խաց թխի, ծծվերդ մեղք են: Սորա որ կմտնես ներս, իմ մոր քյիր կէլնի կասի՝ ի՞նչ կուզես, տյու ասա՝ քյո քյիր կասի սազեր տուր, տանեմ: Էն քյե կասի՝ շատ աղեկ, նստի կտորմ խաց կե, նոր կնա̈, սորա կասի՝ ի՞նչ կուտես՝ ծվա̈զեղ, թե՝ մուրթուխա, դու ասա մուրթուխա: Խետ որ կմտնի ներս՝ տռան իտև էրկեն կոտմ կա կախուկ, սազեր գյեռ մեչ ինորն են, տյու ճամանն շոտմ էն կոտ պատից առ տակ, փախի, մի վա̈խենա, աման խետ որ նեղ տեղ կինես, գյինա̈ մազ տուր կրակ, ես կխասնեմ:

Ախչիկն ի, կինի ճա̈մբա̈խ կէրթա̈: Շատ կէրթա̈, քիչ կէրթա̈, կտեսնա, որ ինչ՝

մեյ խատ արնգյետոմ գյեո խշխշալեն կէրթա: Ախչիկն ի, ճաման աշալա կասի՝ օ՜խ, ինչ անուշ ի, նմանի իմ խոր նուսն գյինին, վոազ չէլնի՝ մեկ պուտ խմի: Գյետն ի ճամբախ կուտա, ախչիկ կնցնի: Կխասնի գյոեխ գյետին կասի՝ օ՜խ. ինչ անուշ ի, իմ խոր ամբրի արաղն ի, վոազ չէլնի մեկ պուտ խմի, գյոեխ գյետն ի ճամբախ կուտա, ախչիկ կնցնի: Ախչիկն ի, կէրթա ինչկանդար ծալուկ խալի կար՝ կպանա, ինչկանդմիր փռուկ խալի կա՝ կծալի, ինչկանդար կոծ տուռ կա՝ կպանա, ինչկանդար պւսց տուռ կա՝ կկոծի: Կխասնի մոտ խաց թխողներ, կտեսնա, որ մարթմ գյեո ոտքյեր կախե թոներ, ոտքով կրակ կխառնի, կասի՝ ավա՛ր, ավա՛ր, ախպե՛ր, թե քյո ոտքյեր կերիցեն, ափսոս են, ա՛ռ քյե շիշ, էսա շշով էսա թոներ խառնի: Կտեսնա, որ մարթմ էլ գյեո ծեռներով չապալամիշ կէլնի, որ գյունդ պանձ, խաց շինի: Ախչիյն ի, կասի՝ ա̈վա̈՛ր, ա̈վա̈՛ր, ախպե՛ր, թե ձեռներդ կցավան, ափսոս ես տյու, ա՛ռ էսա գոտնակ, գնդներ էսա գոտնակով պա̈նց:

Կիշկա էնտեխ, կտեսնա, որ մեյ խատ կնիկմ գյեո խմոր կդնի վեր ուր ծծերաց, կզվի թոներ, խաց կթխի: Ախչիկն ի, կասի՝ ա̈վա՛ր, ա̈վա̈՛ր, մարե՛, թե տյու մեղք ես, ըդսկնա քյո ծծվեր կերիցեն, ա՛ռ էսա մա̈զրա̈կեն, մա̈զրա̈կով խաց թխի: Մա̈զրա̈կեն էլ կուտա ինոր կմտնի ներս:

Խետ որ կմտնի ներս, կտեսնա, որ մեկ խատ ա̈շլա̈շեք պառավմ կէլնի ուր տիմաց կասի. - Խորոտ ախչիկ, ի՞նչ կուզես:

Թակավորու ախչիկն ի, կասի. - Ջիկ քյո քյոր էօրեոխկեց* :

---

* Հեքիաթը կիսատ է մնացած (Ծ.Կ.):